ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 57-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ,ՋՐԱՎԱԶԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ,42-րդ,43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ,35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 21.04.2021թ <<Ինքնակամ կառույցը համայնքային սեփականություն ճանաչելու>> թիվ 37-Ա որոշումը,սեփականության իրավունքի N 21052021-06-0051 վկայականը և հաշվի առնելով, որ քաղաքացի Մերուժան Ռուզվելտի Խեչոյանն ընդունել է այգետնակը,ջրավազանը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռքբերելու գնման նախապատվության գրավոր /մուտք՝ 07.06.2021թ.թիվ 215 / առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան 1-ին փողոց,1-ին նրբանցք,թիվ 34 հասցեում գտնվող 19,27քմ արտաքին մակերեսով այգետնակը, 4,0 քմ արտաքին մակերեսով ջրավազանը և դրանց սպասարկման ու պահպանման համար 0,11075 հա մակերեսով հողատարածքը /ծածկագիր՝ 06-004-0016-0059/ ուղղակի վաճառքով օտարել ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան,6-րդ փողոց,շենք 15,թիվ 18 բնակարանի բնակիչ Մերուժան Ռուզվելտի Խեչոյանին 149993,5 /մեկ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իններեք դրամ հիսուն լումա/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով /տարածաշրջանային 16 գոտի, 0,035 և 0.0016 համապատասխանաբար գործակիցներ/ որից՝
ա/ այգետնակի վաճառքի գինը կազմում է՝ 19,27x30000x0.035= 20233,5 /քսան հազար երկու հարյուր երեսուներեք դրամ հիսուն լումա/ՀՀ դրամ,
բ/ ջրավազանի վաճառքի գինը կազմում է՝ 4,0x20000x0.035=2800 /երկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ,
գ/ հողամասի վաճառքի գինը կազմում է՝ 1000x0.0016x60000=96000 /իններսունվեց հազար / ՀՀ դրամ:

դ/ ավել զբաղեցրած հողամասի գինը կազմում է՝ 107,5x3/0,0016x60000/=30960/ երեսուն հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:

2.Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվարկային հաշվին մուծել 23033,5/քսաներեք հազար երեսուներեք դրամ հիսուն լումա/ ՀՀ դրամ,իսկ 900265123274 հաշվարկային հաշվին՝ 126960 /մեկ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
3.Այգետնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա,ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները ընդհանուր 149993,5/մեկ հարյուր քառասունինը հազար ինը հարյուր իննսուներեք դրամ հիսուն լումա/ ՀՀ դրամ 30օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ:Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ.թիվ 912-Նորոշման IV-րդ բաժնի 37-րդ կետով սահմանած կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. հունիսի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 58-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով 15.06.2021թ.տրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը (գրանցված սեղանամատյանում թիվ1656-ով) և քաղաքացի Նելլի Բաղիշի Մնացականյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Քաղաքացի Նելլի Բաղիշի Մնացականյանի սեփականության իրավունքով պատկանող Թումանյան քաղաքի բնակելի տանը և կառուցապատման սպասարկման 0,1134 հա տնամերձ հողամասին (ծածկագիր՝06-004-0015-0032) տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, Թումանյան քաղաք, 6-րդ փողոց, տուն 6/2) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. հունիսի 15
ք.Թումանյան